

ՅՕՐԲԼՕՋԻ
ԽԱՂԵՐ



Գրեց՝

Ա. ՇԱՏՈՒՆԻ

1923

891.99

R-35

891-39

2-35

19 NOV 2011

ՖՕՐՔԼՕԶԻ
ԻԱՂԵՐ



Գրեց՝

Ա. ՇԱՏՈՒՆԻ

1923

ԵՐԿՈՒ ԽՉՍԻ

Ամէն այն հայը որ ունի հայրենասիրութիւն, պէտք է որ երբեմն իրենց սեղաններուն վրայ քրքական գոեհիկ խաղերը կանչելու: Իրմէն ամօք է որ մեր արիւնք ծծող գալգաններուն բառերովը ժամանց կ'անցնէ: Բայց դուն, հայ մարդ, առ այս գրեցիք, կոմսս կանչել, հայերէն խաղեր եւ կատակներով:

Յրեց Ա. ՇԱՏՈՒՆԻ



3160-21.

Ինք հարիւր տասնը ինը,
չամիչին բարձր գինը,
բոլոր հայեր խենդցան,
հեծան սատանին ձինը:

Տասնը ինը քսանին,
գրամը լեցուաւ բէսանին,
օթօմոպիլներ կը վխտան,
նոր հարս եւ նոր փեսանին:

Քսանը մէկին օրերը,
օթօմոպիլին նորերը,
չու թար չու թար նստելով,
բշեցին տէնս հօլերը:

Եկաւ քսանը երկուքը,
քննեցին բոլոր պուքը,
պանքաները բան չիկայ,
կը չորնայ բերնին թուքը:

Եկաւ քսանը երեքը,
լրենց անձնական բերքը,
մօրկէճին գերի ըրին,
գալող տարուայ քրափը:

Քսանին սեղանները,
տավար խաղուրդայ հաւերը,
բարեկամները հաւաքելով,
ուրախ զուարթ քէֆերը:

Սեղանը քսանը երկուքին,
վրայ չիկայ մէկ քուքին,
էրկան ականջը քաշելով,
հիմայ կը հանեմ հոգին:

Պատիւ ունէի փաշի,
հիմա կարօտ եմ խաշի,
առանց սխտոր խաշ ուտիք,
խաղողները կը խաշի:

Պանքայէն եկաւ նօթը,
թրէնն առնեմ թէ պօթը,
երբոր Փօրքլօղ եղայ,
առի փախայ իմ քօթը:

Իսթէն ինչու դամ թարաս,
էգուն տամ բոլոր փարաս,
քանի որ Փօրքլօղ պիտի ըլլամ,
չեմ հաներ ճանսըն կրաս:

Քրափէն չեկաւ վաստակ,
քեսան չի կայ մէկ ստակ,
ելաւ Իսթը կը փախչի,
ետին չի հասաւ նապաստակ:

Քսանին սփօրթները,
հիմա լեցուան քօրթերը,
ազահութեան պատճառով,
քաշվան ելան կորդերը:

Այդի մը առնէի Փարլէէր,
տերեւները ըլլային տալէր,
խաղողները ալմաս քար,
կինս կապէր ոսկի շալ:

Տալէրները քաղէիք,
հատիկ հատիկ շարէիք,
պտուղները տալմընտ քար,
ծոցերնիս լեցընէինք:

Փօրթլօզ

Մարտկային մեծ կուղը,
մալ տէրը եղաւ խողը,
երբոր Փօրթլօզ եղայ,
ինծի կը բռնէր հաղը:

Մարտկան վրան մնաց,
իմ կէսըս հետը գնաց,
փաքըրներուն գիմելով,
աղջիկն ալ ինքնիրեն գնաց:

Օղիին գոցուած օրերը,
ցաւաց շատերուն փորերը,
կառավարութեան հրահանգով,
գինին թանկեցին հօրերը:

Փառլլորի ճրճը սախատ,
գաւաթ մը ոինի բրած խախաթ,
ծերերը քուֆուր քնելէն,
վրանին չի մնաց թախաթ,

Աղուոր գինի պահողը,
կը խմէ կըլլայ լողը,
ան որ գինին թափեր է,
երեւայ իր պլողը:

Փառլլորի վարդապետը,
խունկը լեցուցեր ճէպը,
մեր տունը ինչու չի օրհնեց,
Փօրթլօզ եղայ նոյն օրը:

Անիծած էգուն քոքին,
ձիերս ըրած պոքին,
երբոր Փօրթլօզ եղայ,
առի փախայ չոր հողին:

Այսօր ծախեցի իմ կովը,
աչքերս արցունքի ծովը,
բերանս առի արեւին,
միայն կը փչէր հովը:

Երբ ծախեցի վառարան,
եկաւ գրացին Սառան,
չաղան կուլայ ու կը պոռայ,
ծախուեցաւ իրեն օրրան:

Ալ ծախեմ իմ սեղան,
հաղարներ Փօրքլօղ եղան,
այս տարուայ դրած կուռդերնիս
բոլորը խոռոզ ելան:

Ալ կը ծախեմ իմ խզար,
պարտքս է սաքսան հազար,
երբոր Փօրքլօղ եղայ,
էրկանս անունն էր խազար:

Սապոն չի կայ քսեմ կաւ,
թրէնն առնեմ թէ ոչ նաւ,
էգուն քոքը նայելով,
էրիկս եղաւ փետտած հաւ:

Այսօր անձրեւ է օդը,
դոնէ չունիմ հին քօթը,
կերակուր եփած տեղըս,
կտարաւ պարօշին կոթը:

Պանքային փարան հատաւ,
խորհելէն թախաթ հատաւ,
կէսըլին արդէն հատաւ,
օթօմօպիլն ալ հինոտաւ:

Եղաւ երեք ամիսը,
տունս չէ մտեր միսը,
էրիկս փնաքըլ կը խաղայ,
ըսէք որ ելլէ տայ փիսը:

Երբ ծախեցի աղաման,
գնաց պիպէռ ու չաման,
կուլամ կը կանչեմ եաման,
էրիկս ալ խաղաց տաման:

Ալ վառեցայ իմ պէտիս,
բան չի մնաց իմ ետիս,
հետն ալ տարին պէտ քըվըր,
տակէս տվերէն սըլֆըր:

Չորս տարի աշխատայ փուճ,
ոտքըս չի կայ հին փապուճ,
երբոր Փօրքլօղ եղայ,
ալմաս մատնին եղաւ թուճ:

Գործեւէն թախաթս հատաւ,
պանքային փարան հատաւ,
օթօմօպիլը սթարթ չըլլար,
բոլորովին հինոտաւ:

Ալ կը ծախեմ իմ սոսկան,
կը ձգեմ կ'երթամ Տայնուպան,
տէրտէր, բժիշկ, պատուելի,
բոլորը եղան աշուկայան:

Կը ծախեմ հաւերուն ֆէնսը,
հագեր եմ կարտած փէնսը,
այսպէս անգութ պաշտօնեայք,
առին մեր բոլոր չէնսը:

Չորս տարի եղայ գերի,
բոլորը բերքի բերի,
այս ալ նոր սթայլ է,
մալ տիրուն խամաթ ըրի:

Քսանին մուշթարին բերին,
երկու անգամ գին դրին,
չեմ ըսեր ծախեմ, թարաս,
առնեմ ելլամ իմ փարաս:

Եղածը անցաւ գնաց,
չիւֆթայ մօրկէճը մնաց,
գալող տարուայ վրայ խորհիւր,
կրնաս մը չամիչը գողցիր:

Եղեմի թաղը կարմիր է,
պարտքըս հազար լիրայ է,
մալ տէրը վեղըս կը քաշէ,
իրեն տեղը կը տիրէ:

Եղեմ արդէն լեռան տակ,
պարտքըս եղաւ անատակ,
կիներս կը նմանի մատակ,
բոլոր պանքաները պտըտաք:

Այգիները կթեցիր,
օթօմօպիլը չթեցիր,
աս տպուրը հիմայ կեր,
խոշոր խոշոր բրդեցիր:

Տանը առաջ էր չիմանթոյ,
դատը ինկաւ Սաքրամանթոյ,
երեքին խոշոր փաստարան,
դատը ըրին չուտով խարան:

Կատակ ու ծաղրանք չեն ըսաք,
աս բաները նոր տեսաք,
գալող տարուայ տաղնապին,
ամէն օր վրան կը խօսանք:

Պարտքս տասն հազար լիրան
չիկայ որ տամ տան քիրան
մինչեւ որ պարտքս խալըսիմ
երբ ծառն ելլայ կրիան:

ԱՍՕՍԷՇԻՆԸ

Սօսէչինը պըստ ըրին,
նոր մէնէճըր մը բերին,
գալող չամչին փրայսը,
պուզին վրայ գրեցին:

Սօսէչինին տաք բերանը,
վրադ դրին գերանը,
տակէն ելաս կամ չելլաս,
կոտրեցին քու բերանը:

Իտալացուոց չոր գլուխը,
տանես կոխես օլուխը,
մինչեւ որ սայն չընէ,
չի թողուս ելլէ սօլուխը:

Գնա, առ հաղորդ ու մաս,
պէտք է որ անունդ տաս,
եթէ ոչ սայն չընես,
կը ծեծեն չեն թողուր լաս:

Շատեր փախան գնացին,
ձիերը անօթի մնացին,
բողոքը ճրճին հասաւ,
վրան վօրէնթ մը հանեցին:

Իրիկուայ ժամը ութը,
տունը կը պատէր մութը,
անկէ հրացան արձակեց,
ալ հասաւ մարդուն թութը:

Պարկեր ես տանը թաւան,
վզիդ կը ձգեն մէկ չուան,
տեսար Եղեմի տեսարան,
քեզ ալ կ'ընեն կախ օրրան:

Լուսովը լուսընկային,
քառսուն ութսուն մարդ կային,
բռնեցքները քաշելով,
աչքն ու բերան խաշին:

Շատ խեղճ եղաւ Հայերուն,
Եղեմ թափեցին արիւն,
մեր բողոքը չեն լսեր,
ոչ տուն ունիք ոչ ալ քուն:

Սօսէ չինին շատ տուիք,
կիներ ալ բանի խառնուիք,
էրիկ, եթէ սալն ընես,
ես ու դուն ալ թարկվիք:

Երբ արշաւեց մեծ խուժան,
տունն ըրաւ երկու բաժան,
եթէ դուն սալն չընես,
հոգիդ կը ծախեն անժան:

Երբ լուսինը ծայր տուեց,
խուժանն էր հարիւր տասնը վեց
հինգ էջքը քակելով,
բսան վայրկեան չի տեսց:

Առտուն ելաւ տէրն էգուն,
քիչ մնաց ելլեր հոգուն,
փորը խօսառութ մը առնելով,
էգին առաւ գոյնզգոյն:

Կանանչ տալէրը քաղեցին,
սրտիս թելերը տաղեցին,
մսին կարօտ մնալով,
եկան սալաթան աղեցին:

Քաղքէ քաղաք փախեցան,
էէնիշ փնաքըլ խաղցան,
սօսէ չինին հակառակ,
սրտերը ընկեր էր կրակ:

Հանեցին տանը քսուրը
նայեցան ճիւղնուն մսուրը,
ճըճին գնաց լուրը,
կոտորեցին մարդուն դուռը:

Գերմանները կապելով,
օթօմօպիլէն կախելով,
վրան ջուր լցին փէլով,
արագ արագ ձեծեւելով:

Կպցուցին ախոռն ու խոտը,
կովուն ալ խանձէր հօտը,
սալն չընելու պատճառով,
մարդ չի գնաց իր մօտը:

Նշանին գնաց աս լուռը,
կաթ լեցուն կովուն յուրը,
թանը մածունէն ելաւ,
իր կնկան սիրտը փլաւ:

Խնդիրը ինկաւ նխապաթին,
մարդ չի մնաց մէկ մաթին,
սայն ընող չի գտան,
զացին գտան մեր կէջին:

Ոսպ ու պղղուր ու ծեծած,
հաւերուն հաւկիթ ածած,
չի մոռցուիր մէկ դար մը,
սօսէջինը մեղ ծեծած:

Կը դարնէին անխնայ,
մէկ թէւէկ պիտ' չի մնայ,
զնա պապուդ ըսէ գայ,
դուն աղջիկն ես տուն-մնայ:

Պանքաներուն նախագահն,
քէմփէյներները ինծի գան,
հոգիները ձեռքիս մէջ,
պարապ տեղը չի տքան:

Վաշինկթընէն հրաման,
մի խաղաք թաւի տաման,
սայն ըրէք որ լմննայ,
սօսէջինին մեծ խաման:

Ժամը դացաք եղաք դպիր,
չամիչ ունիմ երկու լիւր,
աս ալ քեզի թող ըլլայ,
մալտէր մեզի մի դպիր:

Վարդապետը ունի վեղար,
դուն ալ Փօրքլօզ եղա՞ր,
խունկ կը փշրես կոլորտիս,
աշխարհը դոր է իմ ետիս:

Խուժանը տասնը երկուք կիսուն,
կային երկու հարիւր յիսուն,
թեւէքները խրդելով,
հանեցին չորս հարիւր յիսուն:

Ելաք դացաք ճրճին քով,
մեր դանգատ ականջին հով,
ըսաւ, դուք սայն չընէք,
մեր տունները կը լլայ սով:

8/60-24.



Թիւ եկաւ տասներ ինը,
քսան սէնթ չամիչին գինը,
քսանըդ ութսուն ըրիր,
նոր պիտի չինես քու տունը:

Եկաւ քսանը երկուքին,
յիսուն եղաւ մեր էգին,
երբոր մալտէրը եկաւ,
մետաքսը կապեց ագին:

Պանգոսները երբ բացին,
ժողովուրդը ներս գացին,
քառսուն հազար պարտք ըրին,
էգին առին զբացնին:

Պանքային մեծ նախագահն,
եկէք մի ըլլաք դուք ազահ,
երկու տարի չանցածի
Փօրք լօղ կ'ընէ քեզ պանքան:

Տարեդարձդ էր մոմերով,
ատ օրուան կերուխումով,
քսանըդ ութսուն ըրիրի,
սօսէ չինին խոստումով:

Սօսէ չինին մեծ սուտը,
դարձուց գլխուդ պտոյտը,
փոթորկին բաւթ եկար,
որ քեզ նետեց անդունդը,

Քսանին ըրաք մեծ Փրնը,
տասներ հինգ չամիչին գինը,
խոստումը չի կատարեց,
աի նախագահ Կիֆրնը:

Մեղի պէս ըլլաս, դու, Կիֆրն,,
քարըս առին Իսթիֆըն,
դուն եղար միլիոնատէր,
էգուս ելաւ եօթը թըն:

Յրէզնոյի ջոջերուն,
ապրչուն կապեց պոչերուն,
էգինները տուէք տիրուն,
մկլէզ փախուցէք կորթերուն:

ՔԼԼԻՐ

Տիկինս ալ պիտի չի բանիք,
պանքան փարայ պիտի տանիք,
ես դուն պիտի երթաք բաղնիք,
մարդու չըսես այս գաղտնիք:

Երբոր բաղնիք դացաք,
արագ արագ մերկացաք,
իրար նայելով խնդացիք,
կը նմանէիք հաւու ձագ:

Ութսունը ըրի քըլէր,
քառսուն թըն հանեցի լէյըր,
ուրախ դուարթ քաղելով,
կնիկ, դուն, փախլառա կեր:

Բաղնիքը երկայն ու նեղ էր,
աղուոր լողնալու տեղ էր,
կնիկ այնչափ խլաւ ես,
վրագ բոլորը եղեր:

Բաղնից փայիւր պրաս էր,
սապոնին քէփուկը վրաս էր,
ւսըլ նոր սթայլ է,
մէկ տեղ լողնալը պրաս էր:

Տաք ջուրէն կ'ելլայ չողին,
ստոր մէջը կը չաքին,
այս ալ նոր սթա... է,
վզիդ կը փակի հոգին:

Լոգ մը սապոնը դնաց,
միայն մազերդ չոր մնաց,
արագ, արագ քսելէն,
հոգի հաւատք չի մնաց:

Ալ չեմ մոռնար այս թիւը,
ձեռքէ սապոնին լիֆը,
չորս կողմերը լուացի,
եղար կլոր անիւր:

Քու աչքերդ ինչ թուի է,
մազերդ իփաքէն կակուղ է,
տաք ջուր լըլամ սապոնեմ,
մէկ թեւը ոսկիէն սուղ է:

Հիմա ջուրէն դուրս ելաք,
սիրտս կ'անցնի օդը տաք,
մարդ մը ըլլայ նը կը դիմանայ,
երկուքս փէշքիր մը պըլվաք:

Ոսկի պիւրղուք մը պիտի դնեմ,
ճերմակ թեւըդ պիտի դնեմ,
հոս տեղով ալ կը դիմանայ,
որ ես վրագ կը չորցնեմ:

Ժամացոյց դործէ բռաֆը,
դարձուցիր ֆօնէկրաֆը,
անուշ, անուշ կ'եղանակէ,
միսաֆիրներ կը կանչէ:

Տունը լեցուան հիւրերով,
սուրճ եփեցին շաքարով,
գաւաթներուն նայելով,
ֆօրքլօզ ենք այս տարով:

ԱԳԻՆԵՐՈՒ ԱՂԹՔՆԵՐ

Աղօթեցին ու ըսին,
մսքէթին հայր Աստուած ըսին,
տանիք ժամը մոմ լուսիք,
որ այս տարի չի մսին:

Որդին Աստուած սուլաթնէս,
ճափերուն տուեր եմ կէս,
եթէ մեր կինը սայն չընէ,
ինձմէ չուտով քէն կ'ընէ:

Մալական է չոր սուրբը,
անիծուած է իր թուփը,
բոլորը վրան չորցաւ,
դոնէ չի մտաւ գուփը:

Թամսընին դէմ չոքեցաք,
զոյդ, զոյդ մոմեր լուսեցաք,
ֆօրքլօզէն հեռու պահես,
մինչեւ ի լոյս աղօթեղաք:

ԳՆՃՈՆ ԱՂԹՔՆԵՐ

Մսքէթին դէմ խաչ հանես,
մեզ փորձութեան չի տանես,
մեզ նոթերէն աղատես,
երկրպագութիւն ընես:

Սեւ խաղողն է սուրբ Կարապետը,
ամէն օր ըլլաս մեզի հետ,
դուն ես խաղողներուն թագաւո՛ւ
մեզ ըրիր հարուստապետ:

Սուլթանէզին առաջը լաց,
աղօթէ ու սիրտըդ բաց,
ֆրօսթէն մեզ հեռու պահես,
մեզի շնորհէ պըթըր ու հաց:

Փարասաքօն եղաւ սառ,
բոլոր աղօթքներդ ետ առ,
տարին մոմ մը հերիք է,
թեւէքները շատ թիք է:

Էմփրէլ գնա Էջմիածին,
քեզի օգնէ միածին,
ոչ ոքին ունիս ոչ պատիւ,
միայն ճանճերը քեզ խածին:

Սեւ խաղող սրբոյ ամէն,
սիրեմ գինիիդ համէն,
քեզ կ'ընեն պոյայ մելան,
աղօթեցին ժամուն դուրս ելան:

Անուն հօր մաքէթին ըսին,
լաւ տեղը առին մսին,
սիրով սրտով աղօթենք,
զերծ թողուցիր մօրկէճէն:

Թամսըն ըսաք եւ հոգւոյն
լաթեր տուիր գոյնզգոյն,
Իսթիֆըն քառ նստելով,
մեզի տուի խոչոր տուն:

Եւ որդւոյ Սուլթանայ,
վարդապետ պատուելի քահանայ
աղօթեցին անդադար,
մօրկէճներէն զերծ մնայ,

ՀԱՅԹՕՆՆԵՐ

Հայթօն հայ օրիորդներ,
քէտլաք օթօ ուզողներ,
հիմա ֆօրտն ալ ձեռք չանցնիր,
չի կայ զիրենք առնողներ:

Թամսընը վրաս կ'ընես,
պրաս գարիօլայ մը կ'առնես,
օթօ մ'ալ կ'առնես քէտլաք,
ատով է որ զիս կ'առնես:

Բարձր գլխարկ առնողներ,
փաստաբան, բժիշկ ուզողներ,
գործաւոր մ'ալ ըսիք գնացիք,
հիմա ալ տունը մնացիք:

Սօպաներ ոսկի ծոցէ,
ըռպէն հաց մը կ'եփէ,
այսպէս էրիկը սիրեմ,
տարին հատ մը կը փոխէ:

Առաւօտ ժամը ութին,
յաթերըս դարկի իւթին,
նստեր եմ քէտլաք օթէն,
կըլմանի ոսկի խոլի:

Գարիօլան է մհակընի,
կ'ըսեմ քեզի հիմակուրնէ,
սլաուկիս նը գիս շի մօտաս,
մարդ, կը նմանիս փրնի:

Կէիկ դուն եղար մօտակ,
էնչու չընեմ ես կատակ,
վաղը միտ ալ շի բերեմ,
միայն կուտես խաչած տաք:

ԿԱՏԱՆՆԵՐ

Լաթերդ հագար եղար քիւթիկ,
ինքզինքդ ըրիր պուտուկ,
համբայ քաղել չի դիտեր,
կ'ուզէ որ փչէ տուտուկ:

Տղայ քու մարմինդ սեւ է,
քեզ նայողը կ'ըսէ խեւ է,
չուտ բաղնիքէն դուրս ելիր,
Ժամը ճիշդ տասն ու կէսն է:

Չգիտէ հաւկիթ խաչէ,
չգիտէ մաքինան միտ քաչէ,
մատները կուտրած պուրդու է,
կ'ուզէ որ քամանայ քաչէ:

Ալ խալըսաք մեր ետիուն,
մալ տէրը կայնաւ մեր խափուն,
կնիկ, ելիր որ փախիք,
ալ կանչեր է մեր բուրուն:

Դուն կըլմանիս մեծ նանայ,
գլուխըդ լեցուն կանայ,
դուն ալ փիս փիս կը հոտիս,
գարձար խաչած լահանայ:

Տղայ ուր է քու շապիկ,
դու նեղեր ես սեւ կապիկ,
ետիս իյնաս ու քշես,
եւ կը պոռամ վայ պապիկ:

Քսանին վէքէչըն դաղին,
մեծ ծախսերու դուռ բացին,
քսանը երկուքի Փօրքլօդ:
բոլորը հէպը կլլացին:

Այս տարուայ վէքէչընըդ,
տանը ետեւ քու ծառըդ,
կուռ կուշտ տակը քնացիր,
կէսին չունի քու քարըդ:

Լաթերս էր խատու պալադ,
վրաս դրին երկու թաղ,
վէքէչըն երթամ չի կորսուիմ,
բայց ուր մնաց իմ քէտլաք:

Երկու հաւկիթ կը խաչեմ,
աֆիոն քիթըս կը քաչեմ,
մարդ, դուն մէջ մը չես արժեր,
ես քու պալան կը քաչեմ:

Լաթերը զարկեց իւթին,
ճեպը դրեր է խութին,
երբոր սիրտը կը նեղուէր,
քիթը քաչեց պուռն օթին:

Ձիւփ խահուէները աղցիր,
մեծ ծախսերէն շատ վախցիր,
էրկան խորհիլ պէտք չիկայ,
գաղանի չամիչը գողցիր:

Երբոր արեւը մար է,
ինչ որ գողնաս այն քեր է,
թրաքին պոքսերը բառնաս,
մրան քիչ մը խոտ չարէ:

Կանուխ կ'ելլէ մեր տուտուն,
այգին վագեց այս առտուն,
Դովիս գոցուեր է կանչեց,
բոլորը առեր է միլախն:

Շուտով բերէք սըրֆըրը,
ախ, մարդ անիծած քու խըսը,
բոլորը միլախն տարաւ,
միշտ կը մնաս ախոսը:

Թեւերդ ոսկի պիլարդուկ,
դուն կըյմանիս կտր ձուկ,
կիսակտուր մառերդ,
զիս ըրած ալիւրի մուկ:

Հանդերձները սթալիլ,
չնեցին կարդ մը ճահիլ,
հալթօն հալ օրիորդին,
նայողը կ'ըլլայ ըզմալիլ:

Քսանը երկուքը գարձաք,
բոլոր սթալլը մոոցաք,
իւթին տակ ճգմելով,
հին լաթերը հագուցաք:

Երբոր պատուելի եղար,
էգու մը տէր ալ եղար,
աչքերդ գոց պահելով,
կարծես մարդարէ եղար:

Աղաները Ֆաուլըրի,
կուտեն հաւու սալըրի,
սա ազգային սրահը,
ամօթ մեզի մալ չըրի:

Կիւրակէ ժամը տասը,
եկեղեցին կ'եփեն մասը,
ժողովուրդը ժամ չի գար,
գինի չի կալ կարասը:

Դուն կեր չամիչին կլորը,
ալ բան չուտես առ օրը,
խօքէքով տաք ջուր խմես,
գինի կ'ըլլայ քու փորը:

Երբոր դատարան գացիր,
օղիդ կշռեց երկու լիւր,
հիմա կուտաս տուգանքը,
գնա հանդիսա քնացիր:

Ֆաուլըրի սախաթ ճըճը,
կուրծքը կախեր է պէճը,
երբոր օղին բռնեցին,
սրբքաց Մազմանին փէճը:

Թառնէն չելլեր մեր Գոհար,
տէնս հօլը կը վաղէր ճուհար,
մեր մարդ թալլի կը խաղար,
միշտ կը նետէր տէօրթ ճուհար,

Հագեր էիր քուրքով փօսթը,
դուն ունիս երկու տօսթը,
չը գիտես որ մի սիրես,
էրեկդ ըրեր Ֆրօսթը:

Դն ունի շատ էյքըր,
Փոլ Մովսէս եղաւ փէքըր,
որու որ սիրտը կը նեղուի,
թող երթայ խաղայ փինաքըր:

Աստուած ողորմի իր մօրը,
երկու հազար կը չինէ օրը,
լա կերակուր ուտելով,
դուք կը տեսնաք իր փորը:

Շաղրագեան Պրն. Մարգար,
կ'ուզէ գնէ լեռ ու սար,
պանքան դրամ դիզելով,
ալ կը բաւէ երկու դար:

Այ եղեմէ մեր Խաղար,
կարծեմ ունի տաս հազար,
ոմանք Փօրքօտ եղան,
ձիերը հանեցին պաղար:

Նազարէթին պօյը կարճ է,
չապիկ հագնելու խարճ է,
սոխակին ձայնը գողցաւ,
եղանակները բարէ կ'արժէ:

Ով թուզ, տալէրովըդ երկինքն եւ,
քու պտուղդ գեանի վրայ, դուն եւ ծա-
ռերուն թագաւոր, սիրենք քու կեանքդ,
քու տալէրըդ երկինքը, քու չուքդ գեա-
նի վրայ, մեր սեղաններուն վրայ լեցու-
ցիր հաւ ու հաց, պրթըր, դուն քու չոր
պտուղդ տուիր որ մենք ալ տանք մեր
մօտիկէն պարտքերուն, մեզ ազատէ չա-
րէն որ ծիրանի գինը սատանան տարաւ,
քու օղիիդ մարդ չի կշտամար, փորդ
համէն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0350935

47954